prodigi

22.04.2026

«Հետք»-ի լրագրող
Արեն Նազարյանին
«Պրոդիջի» ՍՊ ընկերության տնօրեն
Միդա Ոփյանից
(էլ. Փոստ info@weprodigi.com, հեռ.՝ +374 44 224 226)

Հարգելի՛ պարոն Նազարյան,

Ի պատասխան Ձեր 20.04.2026թ. հարցման՝ «Պրոդիջի» ՍՊ ընկերությունը հայտնում է հետևյալը.

1. **Գովազդի մակնշման վերաբերյալ**

Մեր ընկերությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, որը սոցիալական մեդիայում գովազդի նմանօրինակ պարտադիր մակնշման (օրինակ՝ «Paid for by») պահանջ չի սահմանում:

2. **Պայմանագրային հարաբերություններ և գաղտնիություն**

«Պրոդիջի» ՍՊԸ-ն առևտրային կազմակերպություն է, որը մատուցում է մարքեթինգային և գովազդային ծառայություններ տարբեր հաճախորդների, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների: Բոլոր համագործակցությունները հիմնված են երկկողմ պաշտոնական պայմանագրերի վրա: Այդուհանդերձ, մեր հաճախորդների մասին ցանկացած տեղեկատվություն հանդիսանում է կոմերցիոն գաղտնիք, պաշտպանված է չհրապարակման համաձայնագրով (NDA) և ենթակա չէ հանրայնացման: Ուստի, մենք իրավասու չենք հրապարակել կամ մեկնաբանել պայմանագրերի մանրամասները, վճարումների հիմքերը կամ այլ կողմնակի տեղեկություններ:

Քաղաքական չեզոքության վերաբերյալ

Հատուկ ընդգծում ենք, որ «Պրոդիջի» ՍՊԸ-ն հանդիսանում է ապաքաղաքական կառույց: Մենք որևէ կուսակցության մաս չենք կազմում և չունենք կողմնակալ ներգրավվածություն քաղաքական գործընթացներում: Որպես պրոֆեսիոնալ գործակալություն՝ մենք աշխատում ենք և բաց ենք համագործակցության համար բոլոր քաղաքական ուժերի հետ:

Խնդրում ենք մեր պատասխանը հրապարակել ամբողջական՝ առանց խմբագրումների և կրճատումների:

Հարգանքով՝

«Պրոդիջի» ՍՊ ընկերության տնօրեն՝

Միդա Ոփյան _____

«ПРОДИДЖИ» "PRODIGI" 01278077